Այնչափ քընքուշ չ’ինք տեսեր, երբ տեսայ նա ուշքըս գընաց:

Ժ.

Իմ բարձրագընայ լուսին, շատ բարձըր կ’երթաս ’ւ անահուն,
Շատ երդիք ի վայր իջնուս, շատ տեսնուս ջուխտակ եար ի քուն:
Ով իմ եարոջն է ի քուն, չի վերնա՛յ սընարքն ի գըլխուն:

ԺԱ.

Կարմիր ու սպիտա՛կ երես, շատ մեղքունք արիր՝ թէ գիտես.
Կ’ուզեմ որ սիրեմ ըզքեզ, դու կ’ասես թէ՝ «Մըստուր եմ ես»:
Երթամ հանց վըկայ բերեմ՝ դու սիրոյ խընծորն առեր ես.
Թողեր ես շահէն բազան՝ ագռաւու ձագըն կու սիրես.
Պագն երեսիդ տըւեր ես, այդ նազերդ ի ո՞ր կու ծախես.
Մոխի՛րս աչերուս վըրայ՝ թէ սիրոյ մարդըն դու գիտես:

ՏԱՍՆԵԿՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Իմ եա՛ր, ի քո շատ սիրուդ արծըթէ դալամ շինեցի,
Ձատ քո ըռանայ սուրաթ ի յաջոյ թեւըս գըրեցի.
Ցորեկն ի վրան հայէի, քո սիրո՛վըդ կըշտանայի,
Գիշերն երեսիս դնէի ու բարով ի լուսն ելնէի:

Բ.

Աչերդ է ծովուն նըման, ծով աչիդ ծառա՛յ լինենամ.
Քանի որ ի միտս ընկնիս, ի մահուն դուռըն կու գընամ:

Գ.

Քո սէրն է կըրակ նըման, կըրակըն երկաթ կու հալէ,
Իմ սիրտս է պատառ մի միս, կըրակիդ ի՞նչպէս դիմանայ:

Դ.

Երբոր չես սիրեր դու զիս, է՞ր կուգ’իր լեզուովդ ի իխրար.
Հիմիկ ի՞նչ տեսար դու յիս, զինչ կ’ասիր՝ զամէն սուտ ելար:

Ե.

Կօգա՛լ, մի՛ հագնիր կապուտ, մի՛ խաղար ու տար թեւերուդ,
Մի՛ գար ’ւ ի դըռնովն անցնիր, մի՛ ճօճար, կօգա՛լ, արեւո՛ւդ: